ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **08/04/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Բաղրամյանը, Գրիգոր Ղարիբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նարինե Խաչատրյան, Ռիմա Մանուկյան, Գարիկ Գեվորգյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 08-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 2024 թվականի ապրիլի 08-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝
1) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
2) Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի N 126 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

3) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի սոցիալական ֆոնդին դրամական աջակցություն տրամադրելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի N 127, 128 և 130 որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին.
5) Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրում երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու նախնական համաձայնություն տալու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օտարելու մասին.
7) Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին.
8) Համայնքի ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 20-ի N 85-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
11) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.
12) Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Հակոբ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի պետական ոչ առևտրային կազմակերպության օժանդակ մասնաշենքի վերանորոգման մասին.
13) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի առաջին եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.
14) Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպության պարի խմբակի երեխաներին դրամական աջակցություն տրամադրելու մասին.
15) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
16) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցութի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
17) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցութի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
18) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցութի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
19) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցութի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
20) Ծաղկաձոր համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին.
21) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի

մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագիրը հաստատելու և Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի N 50 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 28-ի N 1/փ-95 եզրակացությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնքի, Արտավազ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0,1 հա մակերեսով նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշակակության, գյուղատնտեսական , գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, այլ հողատեսքի (կադաստրային ծածկագիր 07-017-0143-0029, վկայական N 09082023-07-0041) նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողեր :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 126 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի <<Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 126 որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2;

2. Սույն որոշումն ուժի մեջ է սույն թվականի մայիսի 1-ին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի գրությունը՝

1.Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի սոցիալակն ֆոնդին տրամադրել դրամական աջակցություն՝ 300 000 /երեք հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով, Կոտայքի մարզի ծայրահեղ կարիքավոր անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 127, 128 ԵՎ 130 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի . Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի «Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն»համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների

քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N 127 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1;
2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Ծաղկաձոր համայնքի «Արծափ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը հաստիք ացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N128 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2 :
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հասիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N 130 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն թվականի մայիսի 01-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16 հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի , հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 13-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը:

1. Տալ նախնական համաձայնություն «ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական տարածքի Թեժագետ տեղամասում նեֆելինով հարուստ սիենիտների հաշվարկված պաշարների վերականգման երկրաբանահետախուզական ուսումնասիրության 2024-2026 թվականների ծրագրի շրջանակներում աշխատանքներ իրականացնելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-0 Դեմ-13 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/2 շենքի, 16 հասցեում գտնվող բնակարանը անհատույց օտարել Գևորգ Վիլենի Ալվերդյանին (ծնված 1992 թվականի նոյեմբերի 17-ին, անձնագիր AS 0496019, տրված 01 փետրվար 2019 թվականին, 049 կողմից):
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/2 շենքի, 9 հասցեում գտնվող բնակարանը անհատույց օտարել Արսեն Հովիկի Սուքիասյանին (ծնված 1988 թվականի փետրվարի 04-ին, նք 005505599, տրված 24 փետրվար 2015 թվականին, 049 կողմից):
3.Շենքի կառուցման (սպասարկման) նպատակով տրամադրված հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ սեփականատերը ունի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունք:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:
2. Աճուրդը կազմակերպել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը՝

Վաղաժամկետ դադարեցնել Ծաղկաձոր համայնքի ավագանու անդամ Հմայակ Խաչատրյանի և Արթուր Մելոյանի լիազորությունները:

Կողմ-0 Դեմ-13 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 85-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-թդ և 34-րդ հոդվածների պահանջներով

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024, 2025 և 2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին » N 85-Ն որոշման հավելվածներ՝ 1,2,3,4,5,6,7 շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1,2,3:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի << Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Տող 1261-
Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) <<0.0>> թիվը փոխարինել <<85165,1>> թվով:

2) Տող 13520- Այլ տեղական վճարներ <<6000.0>> թիվը փոխարինել <<115000,0>> թվով:

3) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<4112>> (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) <<57895,3>> թիվը փոխարինել <<87022,5>> թվով:

4) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<4251>> (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) <<0,0>> թիվը փոխարինել <<2000,0>> թվով:

5) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<4269>> (Հատուկ նպատակային այլ նյութեր) <<1000,0>> թիվը փոխարինել <<2500,0>> թվով:

6) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<4823>> (Պարտադիր վճարներ) <<200.0>> թիվը փոխարինել <<500.0>> թվով:

7) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված <<4251>> (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) <<3000.0>> թիվը փոխարինել <<15000.0>> թվով:

8) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված <<5113>> (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) <<40000.0>> թիվը փոխարինել <<117165,1>> թվով:

9) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված <<5122>> (Վարչականսարքավորումներ) <<1000.0>> թիվը փոխարինել <<6000,0>> թվով:

10) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված <<5134>> (Նախագծահետազոտական ծախսեր) <<500.0>> թիվը փոխարինել <<3000,0>> թվով:

11) Բաժին 8 խումբ 4 դաս 2 (Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ) հոդված <<4819>> (Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) <<900.0>> թիվը փոխարինել <<1500,0>> թվով:

12) Բաժին 9 խումբ 5 դաս 1 (Արտադպրոցական դաստիարակություն) հոդված <<5129>> (Այլ մեքենաներ և սարքավորումներ) <<500.0>> թիվը փոխարինել <<1000,0>> թվով:

13) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված <<4891>> (Պահուստային միջոցներ) <<31970,0>> թիվը փոխարինել <<95442,8>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ն/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի, 1-ին, 4-րդ և 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայկ Դավիթի Աղաջանյանի լիազորված անձ՝ Դավիթ Աղաջանյանի դիմումը

1.Հայկ Դավիթի Աղաջանյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց, 2-րդ փակուղի 14 հողամաս հասցեում գտնվող 0,08 հա /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0077, վկայական 19072023-07-0199/ մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց, 2-րդ փակուղի 12 հողամաս հասցեում գտնվող 0,01045 հա /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0118, վկայական 25032024-07-0064/ մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 1 098 692 (մեկ միլիոն իննսունութ հազար վեց հարյուր իննսուն երկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Տալ համաձայնություն իրականացնել Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Հակոբ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության օժանդակ մասնաշենքի վերանորոգման աշխատանքները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ:

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի առաջին եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐԻ ԽՄԲԱԿԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով առաջարկությունը

Ծաղկաձոր համայնքի « Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պարի խմբակի երեխաներին տրամադրել դրամական աջակցություն 1300 000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ, 2024 թվականի մայիսի 29-ից հունիսի 4-ը Հունաստանի Հանրապետության Հանիտոնի քաղաքում կայանալիք միջազգային պարի փառատոնին մասնակցելու համար:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48.1-րդ, 74-րդ և 76 -րդ հոդվածներով՝ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողամասը ընգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Թույլատրել՝ համայնքային սեփականություն հանդիսացող , Հայաստանի Հանրապետություն , մարզ Կոտայք , համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր Ծաղկունյաց Խաչիկ Մուրադյան փողոց 5/13 հասցեում գտնվող 0,00453 հա մակերեսով հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով՝ 90 / իննսուն/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել:
2. Մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրվող հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով <<Դահուկ Հաուս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի լիազոր ներկայացուցիչ Գևորգ Կարապետյանի դիմումը՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Միեր Մկրտչյան փողոց 16/4 հասցեում գտնվող,հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,000225 հա / ծածկագիր 07-005-0021-0154/ հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 90 / իննսուն / տարի ժամկետով օգտագործման տրամադրել «Դահուկ Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, գովազդ տեղադրելու նպատակով :
2. Սահմանել տարեկան վարձավճար 30 /երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Վադիմ Սամվելի Կարամանյանի դիմումը

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Խաչիկ Մուրադյանի փողոց 14/1 հասցեում գտնվող,հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,00084 հա / ծածկագիր 07-005-0020-0961/ հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 90 /իննսուն/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել Վադիմ Սամվելի Կարամանյանին:
2. Սահմանել տարեկան վարձավճար 10 /տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Անահիտ Գևորգի Հայրապետյանի դիմումը

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Խաչիկ Մուրադյանի փողոց 10 հասցեում գտնվող,հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,00151հա / ծածկագիր 07-005-0026-0963/ հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 90 /իննսուն/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել Անահիտ Գևորգի Հայրապետյանին:
2. Սահմանել տարեկան վարձավճար 10 /տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Անուշ Գևորգի Սարկաիսյանից դիմումը

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Խաչիկ Մուրադյանի փողոց 5/14 հասցեում գտնվող,հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,00056հա հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 90 /իննսուն/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել Անուշ Գևորգի Սարկաիսյանին:
2. Սահմանել տարեկան վարձավճար 10 /տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի՝ ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 50 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 37 –րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 2024 թվականի ապրիլի 04-ի N ՀՀ /26.2/9776-2024 գրությունը.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 50 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՈՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Վարիկ Բաղայանը